

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՋԱՔԱՐՅԱՆ
(ծննդյան 50-ամյակի առթիվ)



Մեր գործընկերը ծնվել է 1954 թ. պատմական Գողթան գավառի Փառակա գյուղում, ծառայողի ընտանիքում:

1961-1971 թթ. սովորել և ավարտել է Երևանի Ն. Կ. Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցը, 1975 թ.՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Ինստիտուտը դեռ չավարտած՝ գործուղվել է Հոկտեմբերյանի շրջանի Նոր Արտագերս գյուղի միջնակարգ դպրոցում դասավանդելու: Կարող էր շատերի պես մնալ այդ «տաքուկ» անկյունում, աշխատել մինչև զինակոչային տարիքի լրանալը, սակայն իր խառնվածքին հատուկ

հաստատակամությամբ որոշեց կատարել իր պարտքը և 1975-1976 թթ. Հեռավոր արևելքում՝ Խաբարովսկի երկրամասի Օբլուչիե քաղաքում, որպես շարքային ծառայեց բանակում:

1977 թ. աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունում՝ որպես խմբագիր: Կարճ ժամանակահատվածում տիրապետելով խմբագրական-հրատարակչական ուրույն աշխատանքի նրբություններին՝ խմբագրեց երկու տասնյակից ավելի գիտական ուսումնասիրություններ և մենագրություններ:

1980 թ. հունվարին աշխատանքի հրավիրվեց Գիտությունների ակադեմիայի ավագագույն՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», ամսագրի խմբագրություն, իբրև պատասխանատու քարտուղար: Հասունանալով այդ միջավայրում, խորանալով գիտական-գործնական հիմնահարցերի մեջ՝ նա իր նպաստը բերեց դրանց լուծմանը: Գիտական հանրությունը Ա. Ջաքարյանին ճանաչեց որպես գրագետ, սկզբունքային, լայն մտահորիզոնի տեր անձի: Շուրջ 13 տարի նա եղել է այս ամսագրի պատասխանատու քարտուղարը:

Ազգային զարթոնքի տարիներին՝ 1989-1990 թթ., Ա. Ջաքարյանը վարել է նաև «Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպության «Գոյամարտ» շաբաթաթերթի պատասխանատու քարտուղարի պաշտոնը:

1993 թ. հոկտեմբերից Ա. Ջաքարյանը ղեկավարել է ՀՀ Գերագույն խորհրդի և Ազգային ժողովի աշխատակազմերի կառուցվածքային տարբեր ստորաբաժանումներ, ինչպիսիք են հրատարակչական բաժնի վարիչ, արձանագրային-հրատարակչական բաժնի վարիչի տեղակալ, գրասենյակի ղեկավար, քարտուղարության պետի տեղակալ:

Ա. Ջաքարյանի կազմակերպչական և գործնական աշխատանքը լիովին դրսևորվեց ՀՀ կառավարության աշխատակազմի «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» ՊՓԲԸ-ի գործադիր տնօրեն աշխատելու կարճ ժամանակահատվածում (1998 թ.): Այնուհետև, աշխատանքային գործունեությունը նա շարունակել է Ազգային ժողովի աշխատակազմում:

2000 թվականից ԱԺ աշխատակազմի հրատարակչական բաժնի վարիչն է: Նրա անմիջական ղեկավարությամբ են ստեղծվել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով» (երկրորդ և երրորդ գումարումներ) մեծածավալ, պատկերազարդ, եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) գրքերը, մի հրատարակություն, որն իր նախընթացը չի ունեցել մեզանում:

Սակայն գիտության հետ կապերը չէին կարող ընդհատվել. դեռևս 1999 թ. Ա. Ջաքարյանը ստանձնեց Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդեսի» պատասխանատու քարտուղարի, 2003-ից՝ խմբագրի տեղակալի պաշտոնը: Տեղին է նշել, որ վերը թվարկված պարբերականների հասարակական-քաղաքական, գիտամշակութային արժեքը, դրանց բովանդակության արդիականությունը, գիտակազմակերպչական աշխատանքները պատշաճ մակարդակի բարձրացնելու գործում իր ավանդն ունի նաև Ա. Ջաքարյանը:

Ա. Ջաքարյանը զգալի ներդրում ունի նաև գիտության ասպարեզում: Հիմնական աշխատանքին զուգընթաց, նա պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն (1985 թ.), խորացավ հայ իրականության տարբեր կողմերի ուսումնասիրության մեջ. գիտության մեջ նոր ոտք դրած երիտասարդը հետազոտության թեմա ընտրեց XX դ. 10-ական թվականները՝ մեր ժողովրդի պատմության համար բախտորոշ տարիները: Ա. Ջաքարյանի գիտական ողջ գործունեությունը վերաբերում է հենց այդ շրջանի պատմության՝ մինչ այդ անհայտ կամ քիչ հետազոտված հարցերի ուսումնասիրությանը: Նրա պրպտումների արդյունքով մասնավորապես մեր հանրությունը ծանոթացավ Հովհ. Թումանյանի գլխավորած Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի կրած վնասները քննող հանձնաժողովի գործունեությանը և Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությանը: Գիտական շրջանառության մեջ դնելով պատկառելի քանակությամբ արխիվային վավերագրեր՝ նա մոռացության մշուշից հանեց և ընթերցող լայն հասարակությանը ծանոթացրեց ռուս գրական-հասարակական գործիչների մի աստղաբույլի՝ Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում ծավալված գործունեության մանրամասերին: Դրանք իրենց արտահայտությունը գտան «Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914-1920 թթ.)» (1984 թ.), «Ռուս գրագետները և հայ իրականությունը» (XX դ. 10-ական թվականներ)» (1994, ռուս.), «Ալեքսանդր Կուլեբյակինը և Հայաստանը» (2003, ռուս.), «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս գրական գործիչների գնահատությամբ» (2003 թ., ռուս.) մենագրություններում և բազմաթիվ հոդվածներում ու հրապարակումներում:

Ա. Ջաքարյանի գիտական վաստակը կարևորվում է հետևյալ առումով. նրա աշխատությունները շարադրված են հայրենասիրության և Ռուսաստանի հետ բարեկամության ամուր դիրքերից, պատմության տրամադրած հարուստ փաստերով և կոտ տրամաբանությամբ ներկայացված են հայ ժողովրդի ռուս պետականության ու ժողովրդի հետ ունեցած ավանդական կապերի և հարաբերությունների հիմքերը: Միաժամանակ, հիմնավոր փաստարկումներով մերկացվում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականության երկդիմությունը: Ընդհանրապես, Ա. Ջաքարյանի գլխավոր «զենքը» նոր փաստերն ու փաստաթղթերն են, որոնք էլ նրա ուսումնասիրությունների հիմքն են: Փաստաթղթերի լեզվով խոսելը վկայում է գիտնականի անաչառության և գիտությանը նվիրվածության մասին:

1989-ից գիտահետազոտական, լրագրողական աշխատանքին զուգահեռ Ա. Ջաքարյանը կատարում է դասախոսական-մանկավարժական աշխատանք Երևանի տարբեր բուհերում: 1986 թ. ԽՍՀՄ, ապա Հայաստանի ժողովրդային միության անդամ է: 1995-2001 թթ. եղել է «Նախիջևան» հայրենակցական միության վարչության անդամ:

Թերի կլիներ Ա. Ջաքարյանի՝ քաղաքացու և գիտությանը նվիրված անհատի դիմապատկերը, եթե գեթ հպանցիկ չնշվեր քաղաքացիական այն դիրքորոշումը, որ նա դրսևորեց վերջին տարիներին՝ իր մաս-նակցությունը բերելով երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Նա պատասխանատվության մեծ զգացում ունեցող անձնավորություն է՝ լի եռանդով ու կենսասիրությամբ:

Ցանկանք մեր գործընկերոջը երկար տարիների կյանք, առողջություն և հաջողություններ՝ իր աշխատանքային ու գիտական գործունեության մեջ:

«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»

հանդեսի խմբագրություն